ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/241

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2021թ. թիվ 26/26-1/13522-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.08.2021թ. թիվ ՍՄ//33940-2021 գրության հիման վրա, 24.08.2021թ. թիվ 26/26-1/13522-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/241 ընթացակարգի շրջանակներում 30.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.08.2021թ. թիվ ՍՄ//33940-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կառլեն Առաքելյան Նորիկի» ԱՁ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Կառլեն Առաքելյան Նորիկի» ԱՁ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/241 ընթացակարգի շրջանակներում 30.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/241 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/241 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

3. Գնորդի կողմից 02.07.2021թ., 13.07.2021թ., 19.07.2021թ. և 26.07.2021թ. Վաճառողին ներկայացվել են սննդի մատակարարման հայտեր:

4. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.07.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-

ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից հուլիսի 13-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները մատակարարվել են մասնակի:

Հայտ պահանջագրով ներկայացված Ձեթ ապրանքատեսակի համար՝ 150 լիտրի փոխարեն մատակարարվել է 70 լիտր, շաքարավազ ապրանքատեսակի 250 կգ-ի փոխարեն մատակարարվել է 150կգ, իսկ Վաֆլի 1 ապրանքատեսակը ընդհանրապես չի մատակարարվել»:

5. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 26.07.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Ջիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից հուլիսի 19-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

6. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 28.07.2021թ. կազմվել է թիվ 3 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Ջիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից հուլիսի 26-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները մատակարարվել են մասնակի:

Հայտ պահանջագրով ներկայացված ձեթ ապրանքատեսակի համար՝ 150 լիտրի փոխարեն մատակարարվել է 36 լիտր»:

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 13.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 13-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն

Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումից:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 13.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2021թ. թիվ 26/26-1/13522-2021 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.08.2021թ. թիվ ՍՄ//33940-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

<u>Գնորդի կողմից 02.07.2021թ., 13.07.2021թ., 19.07.2021թ. և 26.07.2021թ. Վաճառողին ներկայացվել են սննդի մատակարարման հայտեր:</u>

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.07.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից ***<u>հուլիսի 13-ին սննդի հայտ պահանջագրով</u>*** ներկայացված ապրանքները մատակարարվել են մասնակի:

Հայտ պահանջագրով ներկայացված Ձեթ ապրանքատեսակի համար՝ 150 լիտրի փոխարեն մատակարարվել է 70 լիտր, շաքարավազ ապրանքատեսակի 250 կգ-ի փոխարեն մատակարարվել է 150կգ, իսկ Վաֆլի 1 ապրանքատեսակը ընդհանրապես չի մատակարարվել»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 26.07.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից ***<u>հուլիսի 19-ին սննդի հայտ պահանջագրով</u>*** ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 28.07.2021թ. կազմվել է թիվ 3 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից

<u>հուլիսի 26-ին սննդի հայտ պահանջագրով</u> ներկայացված ապրանքները մատակարարվել են մասնակի:

Հայտ պահանջագրով ներկայացված ձեթ ապրանքատեսակի համար՝ 150 լիտրի փոխարեն մատակարարվել է 36 լիտր»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 13.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 13-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.12.2020թ. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-ԿԱ» ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումից:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 13.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրերի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանն իր և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 29.12.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված սննդամթերքի մատակարման ժամկետները խախտել է 5 օրից ավելի, ինչի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել

Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2021թ. թիվ 26/26-1/13522-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**